«ՀԱՐՍՆԱՔԱՐԻ ՀՈՂԵՐԻ» ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ

Ս. Ս. ՁԻԼԻՆԳԱՐՅԱՆ

1962 թ. հոկտեմբերին Նոյեմբերյան գյուղից 700 մետր հեռավորության վրա, հյուսիս-արևելյան ուղղությամբ, Նոյեմբերյան—Այրում տանող ճանապարհի աջ եզրին՝ «Հարսնաքարի հողեր» կոչվող հարթավայրում, հիվանդանոցի շենքի հիմքը փորելու ժամանակ, բացվեցին քարարկղյա դամբարաններ, որոնք պատկանում են մի ընդարձակ դամբարանադաշտի, որից շուրջ 600 մետր հեռավորության վրա, հարավ-արևմտյան ուղղությամբ՝ կա վաղ հայկական և վաղ քրիստոնեական շրջանի մի այլ դամբարանադաշտ, որը նման է Հին Վաղարշապատում պրոֆ. Ա. Քալանթարի հայտնաբերած քրիստոնեական և հեթանոսական շրջանի խառը դամբարաններին[1]։

Շինարարության, ինչպես նաև մեր պեղումների ընթացքում հայտնաբերվեցին մոտ 100 դամբարան, որոնք դասավորված են հյուսիսից-հարավ, գրեթե կանոնավոր շարքերով։ Շարքերի հեռավորությունները միմյանցից տատանվում են 2—6 մետրի միջև, իսկ միևնույն շարքում գտնվող դամբարանների միջև եղած հեռավորությունը՝ 2—4 մետր է (առանձին դեպքերում հասնում է մինչև 10 մետրի)։ Դամբարանների միջին խորությունը գետնի մակերևսից հասնում է մինչև 1,5—2 մետրի, երկարությունը տատանվում է 1,5—1,8 մետրի, իսկ լայնությունը 70—100 սմ-ի միջև։

Բոլոր դամբարանները ժամանակի ընթացքում կորցրել են իրենց արտաքին նշանները։ Պատճառն այն է, որ «Հարսնաքարի հողերը» անհիշելի ժամանակից հերկվում և մշակվում են։ Անդամ մեր օրերում, հերկելու ժամանակ, երբեմն, տրակտորների խոփերը հանդիպում էին քարերի։ Դրանք դամբարանների արտաքին նշաններ հիշեցնող սովորական քարեր են, որոնք նկատելի են դառնում միայն հողը 50 սմ խորությամբ փորելուց հետո։ Թաղումները հիմնականում կատարված են հյուսիսից-հարավ, որոնք երկարությամբ երկու կողմից փակվում են 1,5—1,8 մետր երկարությամբ շերտավոր քարերով։ Միայն դամբարանի կենտրոնի ուղղությամբ՝ հյուսիս-արևմտյան մասում, հանդիպեց 3 կողմից շրջափակվող քարարկղային 2 դամբարան։ Դիակները հիմնականում թաղված են նստեցրած վիճակում, իսկ առանձին փոքրաթիվ դամբարաններում թաղել են դիակիզումից հետո։ Նման ձևի թաղումներ են կատարվել նաև Լճաշենում (Նախկին Օրդակլու), ուր պեղումներ է կատարել Երվանդ Լալայանը[2]։ Դամբարանների մարդկային կմախքները հիմնականում քայքայված էին, որի պատճառով դժվար էր նրանց դիրքը որոշել։

Այդ դամբարաններից պեղված իրերից երևում է, որ ամրոցի բնակչությունը օգտագործել է դուրդի վրա պատրաստված, սև գույնի զարգացած խե-

---

1 Բ. Ն. Առաքելյան, Հին Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 290։

2 Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 103։

ցեղեն։ Կավանոթների մի մասի վրա դրվագված են օձերի, խոյերի, ձիերի և այլ կենդանիների գլուխներ։ Հանդիպում են նաև թռչնակերպ կավամաններ։ Ուշագրավ են դամբարաններից հանված զենքերը՝ մարտական կացիններ, մանգաղներ, դաշույններ, նիզակներ, զուրգերը և նետի սլաքները։

Հայտնաբերված բրոնզե զոտիներ, ասեղներ, հուլունքներ, ճարմանդներ, բազմատեսակ նախշազարդ ապարանջաններ, ականջօղերը, պանդլուկները, սարդիոնից, ծարիրից, նրբակավի շփոթից և քարից պատրաստված հուլունքներ և այլ նյութերը ապացուցում են, որ այդ ամրոցների բնակիչները ունեցել են զարգացած մշակույթ։

Ստորև տալիս ենք մեր պեղած 22 դամբարաններից մի քանիսի թաղման ձևերի, դամբարանների կառուցվածքի և նրանցում հայտնաբերված իրերի նկարագրությունը.

ԱՌԱՋԻՆ ԴԱՄԲԱՐԱՆՆ ուղղված էր հյուսիսից-հարավ, ուր հայտնաբերվեցին մարդկային 2 կմախք, որոնց ոսկորները խիստ քայքայված էին ու ցրված։ Դամբարանը երկարությամբ փակված էր 2 կողային սալ քարերով, որոնք ունեին 25—30 սմ հաստություն։ Նույն հաստությունն ուներ ծածկասալը։ Դամբարանի երկարությունը 1,60 սմ էր, իսկ լայնությունը՝ 0,90 սմ. խորությունը ծածկի քարի տակից 1,25 սմ էր։ Ինչպես դամբարանը, այնպես էլ հանգուցյալների գլխի շուրջը գրված կավամանները, լցված էին պինդ հողով։ Դամբարանի 6 կավամաններից մեզ հաջողվեց 4-ը հանել ամբողջական վիճակում։ Դամբարանի կենտրոնում, արևելյան կողային սալից 20 սմ հեռավորության վրա, գտնվեց մեկ դաշույն, որի դաստակը բրոնզից էր, իսկ շեղբը երկաթից (տախտակ 4, նկ. 2)։ Դաշույնի դաստակի երկարությունը 12 սմ էր, իսկ երախակալի լայնությունը 3,5 սմ։ Դաշույնի դաստակը ուներ եռանկյունաձև խոր փորագրումներով զարդանկար, որը նման է Թաղաքենդի № 6 դամբարանից հայտնաբերված բրոնզե դաշույնի դաստակի օրնամենտին[3]։ Դաշույնի երկաթե շեղբը լիովին քայքայված էր։ Բրոնզե երախակալներով զենքերը և, առհասարակ, խոցիչ մասերը երկաթից պատրաստված զենքի տեսակները, վերագրվում են վաղ երկաթի դարին[4]։

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՄԲԱՐԱՆԸ, որը պեղվեց, դամբարանադաշտի հարավային մասում աչքի էր ընկնում կավամանների հարստությամբ ու բազմազանությամբ (տախտակ 1, նկ. 1)։ Դամբարանի երկարությունը չէր անցնում մեկուկես մետրից, իսկ լայնությունը հասնում էր մեկ մետրի։ Հանգուցյալի թաղման դիրքը որոշելն անհնար էր, որովհետև կմախքի ոսկորները խիստ քայքայված էին և ցրված։ Սակայն առկա մեծ քանակությամբ կավամաններն ու նրանց դասավորությունը ենթադրել են տալիս, որ թաղումը կատարվել է նստած վիճակում։ Դամբարանի 2 դավերն էլ ունեն ընդհանուր նմանություն։ Դամբարանի երկուական անցքերով, երկունկանի լայնաբերան կավանոթների բարձրությունը հասնում էր 14,5 սմ-ի, բևբանի լայնությունը 14 սմ-ի, իսկ փորի տրամագիծը 49 սմ-ի (տախտակ 1, նկ. 1, 3)։ Գավաթը լցված էր հողով (որի մեջ կային թռչունի մանր ոսկորներ) և դրված էր ձեռքի մեջ, որն իր հերթին լցված էր հողով և ծածկված սալիկով։ Հավանաբար, սովորություն է եղել թաղման ժամանակ կավամանները լցնել հողով և դնել զեպի հանգուցյալը՝ թեք դրությամբ։

[3] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 84.
[4] Նույն տեղում, էջ 132։

Խոհանոցային կավամանների մեջ ուշադրավ տեղ է գրավում կատարաձև կափարիչ ունեցող փոքրիկ կավամանը (նկ. 1—4)։ Կավամանների երկու ունկերի անցքերին համապատասխան, կափարիչն ուներ նաև մեկական անցք կիպ փակելու համար։ Փոքրիկ դավը դամբարանադաշտի հողվագյուտ ճկած կավամաններից էր, որն ուներ կարճ վիզ։ Դամբարանի ամենամեծ կավամանը՝ ձձումը, ունի հարուստ նախշեր։ Նրա երկու բռնակները, որոնց վրա կային երկուական պտուկներ, ունեին եռանկյունաձև խորաքանդակ գծեր, իսկ բռնակների ուղղությամբ և փորի մեջտեղով անցնում էին երկուական զուգահեռ խորաքանդակ գծեր։ Բերանի կողմի եզրային մասով անցնում էր ոլորապտույտ նախշ։ Ձձումի փորի պարագիծը հասնում էր 109 սմ-ի, բարձրությունը՝ 7 սմ էր, բերանի լայնությունը՝ 17 սմ, հատակի լայնության տրամագիծը չէր անցնում 12 սմ-ից։

Թաղման իրենց ձևերով տարբեր էին № 3, 4, 5, 6-րդ դամբարանները, որոնք գտնվում էին դամբարանադաշտի մեջտեղը՝ արևմտյան մասում, իրարից 2—3 մետր հեռավորության վրա։ Այդ դամբարանների ընդհանուր չափերը միմյանց հավասար էին և մնացած դամբարանների նման երկու կողմերից ունեին երկուական սալ քարեր։ Վերջիններս, ի տարբերություն մնացած դամբարանների, դիակիզված թաղումներով էին, իսկ կավամանները ոչ թե թեքված էին դեպի հանգուցյալը, այլև գրված էին ուղղահայաց։ Նման՝ լրիվ կամ կիսայրված կմախքներ հայտնաբերել է Ե. Լալայանը, Սևանա լճի հարավարևելյան անկյունում՝ Ջաղալու գյուղում[5]։

Դիակիզված դամբարանների հողը, ի տարբերություն մնացած դամբարանների, շատ փափուկ էր և մոխրանման, որի շերտի մեջ հայտնաբերվեցին նաև ածխի կտորներ։ Նպատակահարմար ենք գտնում կանգ առնել միայն № 6 դամբարանի նկարագրության վրա։

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՄԲԱՐԱՆՆ ուղղված էր արևելքից-արևմուտք։ Նրա խորությունը ծածկասալից հասնում էր 1,2 մ-ի, երկարությունը՝ 1,20 մ, լայնությունը 75 սմ էր։ Հողի շերտի հաստությունը, գետնի մակերեսից մինչև ծածկասալը, հասնում էր 0,5 մ-ի։ Դամբարանի հողը շատ փափուկ էր, մոխրանման։ Հանգուցյալի՝ կրակից կարմրավուն գույն ստացած ոսկորները, կարծես, դարսված լինեին միմյանց վրա։ Այրված գույն ունեին նաև կավամանները։ Վեցերորդ դամբարանից հայտնաբերվեց 9 կավաման (տախտակ 1, լուս. 2)։ Դրանցից ուշադրավ էր նեղբերանով, կարմրավուն կճումը, որը պատրաստված է լավ մաղած ավազախառն կավահողից։ Նույն գույնն էին ստացել մնացած կավամանների մեծ մասը։ Դամբարանադաշտի խոհանոցային կավամաններից առանձնահատուկ էր նաև վեցերորդ դամբարանի փոքր կավամանը, որն ուներ սգոցաձև պռունկ (նկ. 2—5)։

Տասներեքերորդ դամբարանը, որը գտնվում էր դամբարանադաշտի կենտրոնական մասի արևմտյան հատվածում, ուշադրավ էր իր բրոնզե զարդերով, թռչնակերպ սափորով և բազմատեսակ, գնդեցիկ հուլունքներով։ Դամբարանն ուղղված էր հյուսիսից-հարավ, երկարությունը 1,5 մ էր, լայնությունը 72 սմ, իսկ խորությունը ծածկասալից՝ 90 սմ։ Հանգուցյալը թաղված էր կուշ եկած դիրքով։ Հայտնաբերվեցին՝ մի թռչնակերպ սափոր, մի դավաթ, քրեղան, երկու

5 Ե. Լալայան, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 117։

ս կանչօղեր և արտաքին մակերեսն ատամնաձևություն հիշեցնող մի ապարանջան ու մի մատանի։ Կավամաններն ու զարդերը հիմնականում դրված էին հանգուցյալի պարանոցի մոտ։ Անփայլ, սև գույնի թռչնակերպ սափորի (տախտակ 3, նկ. 4, գտնվում էր հանգուցյալի գլխի աջակողմյան մասում) բարձրությունը 20 սմ էր, բերանի լայնությունը՝ 4,5 սմ, իսկ փորի տրամագիծը՝ 16,5 սմ։ Կլոր բռնակ և 3 կարճ ոտքեր ունեցող այդ սափորի պոչի երկարությունը 4 սմ է։ Նրա իրանի երկու կողմից աղեղնաձև անցնում էին միմյանց զուգահեռ երկու ոլորապտույտ ակոսաձև նախշեր։ Դամբարանի կենտրոնական մասում գանգի մոտ, գտնվում էր մեկ ասեղ և 148 հուլունքից բաղկացած մի շար (տախտակ 3, նկ. 1), որն իր գեղեցկությամբ, բազմերանգությամբ, բազմաձևությամբ լավագույն հայտնագործությունն է։ Հուլունքներից 6-ը, որոնք ունեն սվաստիկայի և անիվների ձև, պատրաստված են ծարիրից, կան նաև մի քանի պղնձե հուլունքներ, մնացածները պաստայից (շաղախից) են, սարդիոնից և քարից։ Հուլունքների մի մասն ունի գունավոր շերտավոր բծեր։ Սվաստիկայի նման հուլունքներ հայտնաբերվել են նաև Արթիկում[6]։

Դամբարանի կավամանների մեծամասնությունը գավեր են (տախտակ 2, նկ. 1)։ Դրանցից 2-ը գտնվում էին հանգուցյալի ոտքերի մոտ, իսկ մնացածը՝ գանգի։ Հետաքրքիր զարդանախշերով մեկ բռնականի կավանոթի բերանի կողմից ձգվում էին իրար զուգահեռ 4 գոտի, իսկ նրանից ներքև՝ կավանոթը ծածկված էր բեկբեկյալ խիտ գծազարդերով (տախտակ 2, նկ. 3)։ Դամբարանից հայտնաբերվեցին նաև խալցեդոնից պատրաստված խոշոր հատիկավոր և ապակու շաղախից պատրաստված մանր երկու տեսակի հուլունքներ (տախտակ 3, նկ. 2)։ Վերջիններս դամբարանադաշտի ամենախոշոր և ամենամանր հուլունքատեսակներն են։ Տասնչորսերորդ դամբարանում գտնվեց նաև 2 ապարանջան, նրանցից առաջինը անզարդ էր, պատրաստված պրիզմաձև բրոնզե մետաղալարից, իսկ մյուսը, որը պատրաստված էր կլոր մետաղալարից, ծայրերը վերջանում էին նուրբ նախշերով։ Դամբարանի կենտրոնական մասում գտնվեց 12 սմ լայնությամբ զարդարուն բրոնզե քայքայված գոտու բեկոր (տախտակ 5, նկ. 2), որի եզրամասով անցնում են գնդիկավոր նախշեր, ապա հաջորդում սլաքաձև ու սղոցաձև նախշեր։ Կենտրոնում պատկերված է եղնիկանման վայրի կենդանիների երկշարք հոտ։ Գոտին նման է Հաղբատի գոտուն, որից տարբերվում է միայն եզրամասային նախշով և կենտրոնական մասում պատկերված նախշաշերտով։ Անդրադառնալով նման գոտիներին, պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանը դրանք վերագրում է ուշ բրոնզեդարյան 3-րդ էտապին՝ 11-ից 10-րդ դարերին[7]։

Ի դեպ, վերոհիշյալ դամբարանադաշտից 11 մետր հեռավորության վրա, դեպի հյուսիս, դամբարաններից մեկում հայտնաբերվեցին բրոնզե մի այլ գոտու կտորներ, որոնք հարուստ որսորդական բնապատկերների ոճավորված պեյզաժ են ներկայացնում (տախտակ 5, նկ. 1)։ Ինչպես նկատել է Հ. Ա. Մարտիրոսյանը, վերջինս էլ նման է Վիրխովյան գոտուն, ինչպես նաև Շամիրամ գյուղի կրոմլեխների պատկերներին ու Քալաքենտյան դամբարաններում հայտնաբերված գոտիներին, վերագրելով այդպիսիներին նույնպես բրոնզե-

[6] Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, 1963, стр. 83—86

[7] А. А. Мартиросян, указ. соч., стр. 136

դարյան 3-րդ էտապի նույն դարերին[8]։ Բրոնզե դոտին որոշ նմանություն ունի Սանահինի դոտուն, հատկապես նման է այդ դոտու եզրամասերով անցնող պարուրաձև նախշերին։ Սակայն Նոյեմբերյանի դոտին, իր որսորդական տեսարանի սյուժետային բովանդակությամբ, ավելի հարուստ է։ Խոսելով Հայաստանի դոտիների մասին, Հ. Ռ. Իսրայելյանը նշում է, որ նրանց մեծամասնությունը, ինչպես բովանդակությամբ, այնպես էլ բացահայտելու միջոցներով, եղանակներով ու պատկերներով կապված են Սևանի, Ախթալայի և Սանահինի դոտիների հետ[9]։

ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՄԲԱՐԱՆԸ գտնվում էր կենտրոնի ուղղությամբ հյուսիսային ծայրամասի մոտ, 22-րդ դամբարանի կողքին։ Դամբարանը պատրաստված էր զույգ ննջեցյալների համար։ Տղամարդու դանդը գտնվում էր լայնաբերան քրեղանի մեջ, որից 30 սմ ցած, իրար մոտ դասավորված էին նիզակը, մարտական կացինը, գաշույնը և մանգաղանման զենքը (տախտակ 4, նկ. 1)։

Կավամանները հիմնականում դասավորված էին դամբարանի կենտրոնական մասում։ Կանացի դանդը գտնվում էր տղամարդու դանդին զուգահեռ, հավասարաչափ հեռավորության վրա։ Դանդի մոտ գտնվում էր նեղբերան կճուճ, իսկ նրանից ցած՝ խուլ բռնակներով կավե մի վոքրիկ կաթսա, որի մեջ գտնվեց խոշոր եղջերավոր անասունի ոսկորներ։ Կենդանիների նման ոսկորներ հայտնաբերվել են Արթիկի թաղումներում և շատ այլ դամբարանադաշտերում[10]։ Մնացած կավամանները գտնվում էին դամբարանի կենտրոնական մասից մի քիչ ցած։ Խուլ բռնակներով ամանը դամբարանի մնացած կավամանների նման պատրաստված է լավ մաղած կապտագույն ավազախառն կավից։ Սև գույնի կավե թասիկի մեջ կար գեգին գույնի պաստայից և սարդիոնից պատրաստված հուլունքներ։ Դամբարանի լայնաշուրթ անզարդ քրեղանի մոտ կար բրոնզե թիթեղից պատրաստված մի նախշազարդ ապարանջան և զսպանակաձև մի մատանի։

Ինչ վերաբերում է զենքերին, ապա նիզակը, որի կոթառը երկար է շեղբից, ունի 34,5 սմ երկարություն, իսկ շեղբի միջին լայնությունը 4 սմ է։ Մարտական կացինը, որ կշռում է 701 գրամ, իր մեծությամբ ամենափոքրն է Նոյեմբերյանում հայտնաբերված կացիններից։ Մանգաղանման, ավելի շուտ կիսալուսնաձև կոթի կողմից ունի 2 անցք, փայտի կոթին ամրացնելու համար և վերջանում է փոքր ելուստով. նրա երկարությունը հասնում է 18 սմ-ի, առավելագույն լայնությունը՝ 8,5 սմ է։ Նկատելի է, որ նրա աշխատեցրած կողմը ոչ թե զոգավոր կոմն է, այլ ուղիղ, որը ավելի բարակ է ու սուր։ Անդրադառնալով մանգաղանման զենքերին, պետք է նշել, որ Նոյեմբերյանի «Հարսնաքարի հողերի» դամբարանադաշտում, Այրումի ավանում և Ղոշղոթանում հայտնաբերվածները միևնույն դամբարաններում հանդես են եկել մարտական կացինների հետ միասին ու միևնույն կերպ են։ Վերջերս, Ղոշղոթանի «Խլաթանց գոմատեղ» կոչվող դամբարանադաշտի № 1 դամբարանում, իրար կողքի, հայտնաբերված կացինը և մանգաղը որոշ տարբերություն ունեն Նոյեմբերյանի կացիններից և մանգաղներից։ Ղոշղոթանի մանգաղանման զենքը,

8 Նույն տեղում, էջ 138։

9 Հ. Ռ. Իսրայելյան, Հայաստանի բրոնզե դոտիների որսորդական տեսարանները «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 245։

10 Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 24։

որն ունի 9 սմ լայնություն, ավելի լայն է, քան Նոյեմբերյանի և Այրումի մանգաղները։ Ի տարբերություն դրանց, վերջինիս 2 կողմն էլ սուր է և ունեցել է երկկողմանի գործածություն։

ՏԱՄՈՒՆՆԵՐՈՐԴ ԴԱՄԲԱՐԱՆՈՒՄ, որը ուղղված էր հյուսիսից-հարավ և ուներ 1,5 մետր խորություն, հայտնաբերվեց մարտական կառքով զրվաղված կավե սափոր, մի քրեղան, 2 դավ, լայնաբերան մեկ բաժակ և 2 բութ կանթերով փոքրիկ կավե աման (տախտակ 2, նկ. 2)։ Կենտրոնական մասում գտնվեցին բրոնզե ասեղ, ճարմանդ, ինչպես նաև սպիտակ ու գորշ գույնի մանր, սարդիոնից և ապակե պաստայից պատրաստված շերտավոր հուլունքներ։ Մարտակառքով զրվագված սափորի պարագիծը 100 սմ է։ Այն ունի ուղղանկյունաձև 2 բռնակ, իսկ զրանց հակադիր կողմը 2 քանդակներ՝ մի կողմում հաստ խամոտիկով լծված 2 վազող ձիերի պատկերներ, իսկ մյուս կողմում՝ զույգ ձիերով սլացող մարտակառքի քանդակ, որը ընդհանուր նմանություն ունի Ախթալայի բրոնզե զոտու վրա նկարված մարտակառքերին[11]։

ՔՍԱՆԵՐԿՈՒԻԵՐՈՐԴ ԴԱՄԲԱՐԱՆԸ գտնվում էր դամբարանադաշտի կենտրոնի ուղղությամբ հյուսիսային եզրամասի մոտ։ Այն հարուստ էր կավամաններով, բրոնզե զենքերով ու զարդերով։ Դամբարանում կար ջարդված 2 դավ, ինչպես նաև 3 քրեղան, 3 թաս և մի փոքրիկ կճուճ (տախտակ 2, նկ. 3)։ Զույգ թաղումով մարդկային կմախքի ոսկորները խիստ քայքայված էին և ցրված։ Դամբարանում հայտնաբերվեց դաշույն, նիզակ (տախտակ 4, նկ. 3), ասեղ, բրոնզի թիթեղյա զարդարուն և հաստ մետաղալարից պատրաստված ապարանջաններ։ Վերջինս (տախտակ 3, նկ. 3) նման է Վրաստանում հայտնաբերված ծանր տիպի ապարանջաններին, որոնք ըստ հնագետ Տ. Զուբինիշվիլու, ծառայել են փոխանակության համար։ Դամբարանի դաշույնի երկարությունը 33,5 սմ է, իսկ սնամեջ նիզակի երկարությունը՝ 30,5 սմ։ Դաշույնի շեղբի երկու երեսին՝ վերից վար իջնում են 9-ական ակոսներ, նրա դաստակն ավարտվում է քանդակազարդ կոճականման վերջավորությամբ։ Շեղբի վրա նման 9-ակոսավոր դաշույններ հայտնաբերվել են նաև Արթիկում[12]։ Դամբարաններում հայտնաբերված քրեղաններից երկուսը (տախտակ 2, 2—3՝ ունեն կարմրավուն, իսկ երրորդը՝ սև գույն։ Ի հակադրություն դամբարանադաշտի մյուս քրեղանների, երկրորդ քրեղանն ունի պոռնկավոր հարթ հատակ։ Գորշ կարմրավուն գույնի է դամբարանի անկանթ փոքրիկ կճուճը, որը պատրաստված է կոշտ ավազախառն կավից, իսկ զրեթե միևնույն մեծությամբ և նմանությամբ երկու թասիկներն ու անշուրթ փոքրիկ թասիկը ունեն սև գույն, որոնք պատրաստված են մաքուր մաղած ավազախառն կավից։

Շինարարության ժամանակ այդ նույն դամբարանադաշտում հայտնաբերված շատ բնորոշ հուշարձաններ՝ բրոնզե զոտիները, գայիսոնները, գուրզերը, դաշույնները, նիզակները և զանազան զարդերը պատրաստված են բարձր արվեստով և ճաշակով։ Կրոնապաշտամունքային բնույթի կավանոթները՝ ձիերի, խոյերի զլուխներով, օձերի և գորտերի պատկերներով զրվագված սավորներն ու ձձումները նույնպես պատրաստված են բրուտագործի բարձր ճաշակով։ Վերջիններս, իրենց պատրաստման որակով և արվեստով, ունեն ընդհանուր նմանություններ Սանահինի կրոնապաշտամունքային կավամանների հետ, որոնց բնութագիրը տվել է պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանը և վերագրել 11-րդ

[11] А. А Мартиросян. Նշվ. աշխ., էջ 139։
[12] Т. С. Хачатрян. Նշվ. աշխ., էջ 83—86։

դարի վերջերի մշակույթին[13]։ Դամբարանների պեղումները Նոյեմբերյանում ապացուցում են, որ նրա նյութական մշակույթը, որը վերաբերում է ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի դարաշրջաններին, պատկանել է տեղաբնիկ ցեղերին, որոնք ունեցել են իրենց հիմնական բնակավայրերը։ Այն իր վրա կրում է ինքնատիպության կնիք, թեպետ և ընդհանուր շատ նմանություններ ունի Լճաշենի, Գեղարոտի, Արթիկի, Կիրովականի, Ախթալայի, Սանահինի բրոնզեդարյան շրջանի նյութական մշակույթի հետ, ինչպես նաև Սամթավրիի, Թրիալեթիի շրջանի Բեշտաշենի, Սաֆար-Խարաբա, Գերակ-չայի դամբարանների ուշ բրոնզեդարյան նյութական մշակույթների։

Ունենալով հարևան ցեղերի հետ մշակութային և փոխանակային կապեր, Նոյեմբերյանի տեղաբնիկ ցեղերը ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի դարաշրջաններում ունեցել են բարձր զարգացած անասնապահություն, որը տնտեսության որոշիչ ճյուղն է եղել՝ համեմատաբար պրիմիտիվ երկրագործության պայմաններում։ Միաժամանակ դամբարաններում հայտնաբերվող բրոնզե զոտիների վրա որսորդական սյուժետային պատկերները ապացուցում են, որ բնիկ հասարակության համար կարևոր կենսական միջոցներից մեկն է համարվել նաև որսորդությունը։

Ժամանակաշրջանին համապատասխան զենքերի տեսակների՝ սրերի, դաշույնների, նիզակների, մարտական կացինների, մանգաղանման զենքերի, նետասլաքների, նետ ու աղեղների, ինչպես նաև մարտակառքով գրվագված սափորների հայտնաբերումը Նոյեմբերյանում ապացուցում են, որ այդտեղ բնակվել է մի ռազմատենչ ցեղ։

Նոյեմբերյան գյուղի շրջակայքում գտնվող հնագույն կիկլոպյան կառույցների գոյությունը և նրանց մոտ գտնվող պղնձի, երկաթի հանքերի առկայությունն ու վաղագույն ձուլարանների գոյությունը այն ենթադրությանն է հանգեցնում, որ առատորեն հայտնաբերվող բրոնզե իրերը արտադրվել են տեղում, ունենալով իրենց սեփական մետաղամշակման արտադրության օջախները։

Նոյեմբերյանի «Հարսնաքարի հողերի» դամբարանադաշտից հայտնաբերված ձվի մեծությամբ ձվաձև երկնային երկաթի և երկաթե շեղբով, բրոնզե դաստակով դաշույնների և ոչ հեռու տարածության վրա երկաթե զարդերի հայտնաբերումը ենթադրել են տալիս, որ, հավանաբար, բնիկներին դեռ վաղուց հայտնի է եղել երկաթի մշակման եղանակը։ Սակայն, հայտնի է, որ երկաթը մշակման բարդության հետևանքով քիչ էր և թանկ։ Տասնհինգերորդ դարում խեթերի մոտ երկաթը 5 անգամ թանկ էր ոսկուց, որի պատճառով այն սկզբնական շրջանում օգտագործվում էր միայն զարդերի և զենքերի խոցիչ մասերի՝ հատկապես դաշույնների խոցիչ մասերի համար[14]։ Հայտնի է, որ Հայաստանում և Անդրկովկասում երկաթ սկսել են մշակել մ. թ. ա. XII դարում, երբ այն օգտագործվում էր սակավ և հազվագյուտ դեպքերում[15]։

Ընտանի կենդանիների՝ կովերի, ձիերի, ոչխարների և թռչնակերպ քանդակներով կավամանների, այդ թվում կովկիթների, ձձումների առկայությունը հիշյալ դամբարաններում, խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորները, ինչպես նաև իլիկի՝ կավից պատրաստված գլուխները ապացուցում են,

13 А. А Мартиросян, նշվ. աշխ., էջ 140։
14 Э. А. Менабде, Хеттское общество, Тбилиси, 1965, стр. 65—67.
15 Л. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 132։





Տախտակ 1



Տախտակ 2

84.1



84.2



84.3

84.4

Սալիտակ 3



Տախտակ 4



Տախտակ 5

որ բնիկները և Հայաստանում ապրող ցեղերը իրենց տնտեսական զարգացմամբ գրեթե քիչ էին ետ մնում հարևան ցեղերից՝ խեթերից, որոնք դեռ վաղ ժամանակաշրջանից զբաղվել են կաթի և բրդի մշակմամբ։

Անասնապահության և մետաղամշակության ինտենսիվ զարգացումը, սկսած բրոնզեդարյան շրջանի վերջերից, ապացուցում է Բ. Պիոտրովսկու այն միտքը, ըստ որի Անդրկովկասում «Բրոնզե էպոխան (երկրորդ հազարամյակի վերջը և առաջին հազարամյակի սկիզբը) հանդիսացավ լեռնային ցեղերի տեռիտորիալ սահմանափակ կուլտուրայի ինտենսիվ զարգացման շրջան, որը կապված էր լեռնային արոտավայրերի և հանքային հարստությունների յուրացման հետ»[16]։

Այսպիսով, Նոյեմբերյանում հայտնաբերված հնագիտական նյութերն ապացուցում են, որ այնտեղ ապրող ցեղը XIV—XVII դարերում, Հայաստանում և Անդրկովկասում ապրող հասարակության հետ միասին դտնվել է ցեղային միությունների կազմավորման շրջանում, որոնք գտնվում էին մինչ դասակարգային, նախնադարյան-համայնական հասարակարգի վերջին ստադիայում։

Դատելով Նոյեմբերյանի «Հարսնաքարի հողերի» դամբարանադաշտից, պետք է ընդգծել, որ դամբարաններում հայտնաբերվող տարբեր տեսակի ու քանակի իրերի գոյությունը ապացուցում են, որ արդեն հասարակության անդամներն այնտեղ սկսել էին ապրել գույքային ունեցվածքի տարբեր պայմաններում։ Հարկ է նշել, որ ցեղային ավագանու դամբարանների մեջ հայտնաբերվում են ավելի շատ զենքի տեսակներ և զարդեր։ Անասունների մասնավոր սեփականության հիման վրա սկսվում է դասակարգային հարաբերությունների սաղմնավորման պրոցեսը։ Վերոհիշյալ ժամանակաշրջանում ոչ միայն Նոյեմբերյանում, այլև ամբողջ Հայկական լեռնաշխարհում ձևավորվում են բազմաթիվ ցեղային միություններ։ Թրիալեթիի և Լճաշենի ցեղային ավագանու հարուստ թաղումները, Արթիկի և Նոյեմբերյանի բրոնզեդարյան թաղումները ցույց են տալիս, որ տնտեսության հիմնական ձևը այն ժամանակ դառնում էր անասնապահությունը, որը պատճառ էր դառնում ունեցվածքային տարբերության, և կիկլոպյան կառույցների առաջացումը պատրիարխալ համայնքների ձևավորումը երկրորդ հազարամյակում, ընդհանուր երևույթ էր Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերի համար։

Ցեղային միությունների առաջացումը, պատրիարխիալ համայնքների ձևավորումը, գույքային անհավասարության առաջացումը արդեն երկրորդ հազարամյակում բնորոշ էր Հայաստանի համար[17]։

МОГИЛЬНИКИ «АРСНАКАРСКИХ ЗЕМЕЛЬ»

С. С. ЧИЛИНГАРЯН

Резюме

Ноемберянский район Армянской ССР богат весьма разнообразными археологическими памятниками, которые, однако, почти незатронуты исследованием. Один из интереснейших памятников эпохи поздней брон-

16 Б. Б. Пиотровский. Основные этапы древнейшего земледелия в Армении. «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4, էջ 120—121։

17 Գ. Ա. Տիրացյան, Հին հայկական պետության առաջացումը, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1966, էջ 87։

зы и раннего железа является, частично исследованный в 1962—1963 гг., могильник «Арснакара», расположенный на северо-восточной окраине районного центра, занимающий около трех гектаров площади и состоящий из обыкновенных каменных ящиков. В них содержится одиночные или парные захоронения с богатым погребальным инвентарем XIII—IX вв. до н. э. Материалы эти имеют параллели в комплексах изделий Лчашена, Гахарота, Артика, Ахталы и других районов распространения культуры бронзы Армянского нагорья.

Большим количеством выделяются богато орнаментированные глиняные сосуды различных образцов и назначений, предметы вооружения, остатки костей крупного и мелкого рогатого скота, остатки зерен культурных злаков (ячменя и пшеницы), которые свидетельствуют о сравнительно высокой ступени развития разных отраслей хозяйства местных жителей.

Неподалеку от могильника, в зоне расположения медных и железных руд имеются довольно мощные циклопические крепости с остатками древних плавильных печей и отвалами производства. Эти объекты металлургии эпохи бронзы и раннего железа подтверждают наличие местных солидных производственных очагов.